

Լրամշակված է՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի « 24 » մայիսի 2022թ.-ի նիստում
Գիտական խորհրդի նախագահ _____ Ե. Սերոբյան

Հիմք՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան»
հիմնադրամի գիտական խորհրդի « 31 » հունվարի 2020թ.-ի
նիստում խառնատիպ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների
վարկանիշավորման և խրախուսման կանոնակարգ
Գիտական խորհրդի նախագահ _____ Ե. Սերոբյան

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն կանոնակարգը սահմանում է Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) ուսանողների վարկանիշավորման չափանիշներն ու ընթացակարգը, անվանակարգման և խրախուսման տեսակներն ու տրամադրման կարգը:
- 1.2. Սույն կանոնակարգի դրույթները տարածվում են բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերով առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորող ուսանողների վրա: (Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022թ.-ի մայիսի 24 –ի նիստում)

2. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ

ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսանողների վարկանիշավորման և խրախուսման հիմնական նպատակն է ուսումնական, գիտական և հասարակական աշխատանքների ուղղություններով ուսանողների պոտենցիալի որակի ուսումնասիրումը, խթանումը, հետագա զարգացումն ու կատարելագործումը, Համալսարանի զարգացման գործընթացներին ուսանողների ներգրավվածության ապահովումը:

Ուսանողների վարկանիշավորման և խրախուսման գործընթացների խնդիրներն են.

- 2.1. Ուսանողների գործունեությունն արտացոլող տվյալների հենքի ստեղծում և պարբերաբար թարմացում:
- 2.2. Ուսանողների աշխատանքների արդյունավետության գնահատման համար համակարգված միասնական չափանիշների մշակում և ցուցիչների սահմանում:
- 2.3. Ուսանողների գիտահետազոտական, գիտակազմակերպչական, ուսումնամեթոդական, ինչպես նաև ներհամալսարանական և հանրային գիտակրթական ու հասարակական աշխատանքների ուսումնասիրում, մշտադիտարկում և վերլուծություն:
- 2.4. Ուսանողների կողմից ծավալվող գործունեության ուղղությունների զարգացում և կատարելագործում, մոտիվացիայի և նախաձեռնողականության բարձրացում, նյութական և բարոյական խրախուսման համակարգի ձևավորում և գործադրում:

3. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ

ՀԱՎԱՔԱԳՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

- 3.1. Ուսանողների վարկանիշավորման ոլորտներն են.
 - 3.1.1. Ուսանողների ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնակազմակերպչական գործունեություն,
 - 3.1.2. Ուսանողների գիտական, գիտահետազոտական և գիտամեթոդական գործունեություն,
 - 3.1.3. Ուսանողների ներհամալսարանական և արտահամալսարանական (հանրային) հասարակական գործունեություն:
- 3.2. Ուսանողների վարկանիշավորման ցուցիչները՝ ըստ գնահատման ձևերի բերված են հավելված 1-ում:
- 3.3. Ուսանողների վարկանիշավորումն իրականացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին, որի ժամանակ հավաքագրվում և ուսումնասիրվում են ուսանողների ուսումնական, գիտական և կազմակերպչական գործունեության մասին տարեկան տվյալները:
(Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022թ.-ի մայիսի 24 –ի նիստում)

3.4. Ուսանողների վարկանիշավորման ընթացակարգը ներառում է հետևյալ փուլերը.

3.4.1. 1-ին փուլ. Նախապատրաստվում է գնահատման գործիքակազմը, հավաքագրվում են նախնական տվյալներ և տեղեկություններ գնահատման ենթակա չափանիշների մասին, ֆակուլտետներից ստացվում են համապատասխան տվյալներ գնահատվողների վերաբերյալ (ըստ ուսանողների դիմումների), ճշգրտվում են գործընթացի ժամկետները, նախապատրաստվում բոլոր անհրաժեշտ նորմատիվային, իրավական փաստաթղթերը: (**Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022թ.-ի մայիսի 24 –ի նիստում**)

Այս փուլի գործընթացները իրականացնում են ամբիոնների և ֆակուլտետների ՈԻԳԸ պատասխանատուները՝ ՈԻԳԸ նախագահի գլխավորությամբ:

3.4.2. 2-րդ փուլ. Տվյալները մուտքագրվում են ընդհանուր տվյալների բազա՝ հետագա գնահատման և վերլուծության նպատակով: Տվյալները սահմանված կարգով առցանց համակարգ մուտքագրելուց հետո ենթակա չեն փոփոխման: **Հավելված 1-ի** ձևաթերթային տվյալների հավաստիության և դրանց՝ ժամանակին համակարգ ներմուծման պատասխանատվությունը կրում է ՈւԳԸ-ի նախագահը, ում հաստատմամբ թույլատրվում է տվյալների մուտքագրումը էլեկտրոնային համակարգ:

3.4.3. 3-փուլ. Էլեկտրոնային բազայում եղած տվյալները ճշգրտվում և ստուգվում են Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի համապատասխան պատասխանատուի կողմից:

4. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՏԵՄԱԿՆԵՐԸ

4.1. Համալսարանում կիրառվում են անվանակարգման հետևյալ ձևերը.

- ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնակազմակերպչական գործունեությամբ լավագույն ուսանող,

- գիտական, գիտահետազոտական և գիտակազմակերպչական գործունեությամբ լավագույն ուսանող,
- հասարակական գործունեությամբ լավագույն ուսանող:
- լավագույն ուսանող /ըստ համընդհանուր վարկանիշային միավորի/

Անվանակարգերը գործում են բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի կրթական ծրագրերով ուսումնառողների համար՝ առանձին-առանձին: (Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022թ.-ի մայիսի 24 –ի նիստում)

4.2. Համալսարանում կիրառվում են նյութական և ոչ նյութական խրախուսման հետևյալ ձևերը.

- նվեր կամ հուշանվեր,
- դրամական մրցանակ,
- վարձավճարի մասնակի փոխհատուցում,
- գիտաժողովներին, կոնֆերանսներին, մրցույթներին, ցուցահանդեսներին և այլ միջոցառումներին մասնակցության ֆինանսավորում,
- ռեկտորի կողմից շնորհակալագիր,
- պատվոգիր,
- երաշխավորագիր՝ ուղղված գործատուին:

5. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

5.1. Տվյալները մեկ ընդհանուր բազայում հավաքագրելուց հետո (ըստ հավելված 1-ում ներկայացված ձևաչափի) իրականացվում է տվյալների ամբողջական վերլուծություն, ուսանողների վարկանիշավորում և խրախուսում՝ ըստ հավելված 1-ի ոլորտների և սույն կանոնակարգով սահմանված անվանակարգման և խրախուսման համապատասխան տեսակների:

5.2. Ռեկտորի հրամանով կազմվում է ուսանողների վարկանիշավորման և խրախուսման հանձնախումբ: Հանձնախմբի կազմում ընդգրկվում են ռեկտորը (հանձնախմբի նախագահ), Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրենը (հանձնախմբի նախագահի տեղակալ), Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի տնօրեն-

պրոռեկտորը, Ուսանողների աջակցության, բուհ-գործատու համագործակցության բաժնի պետը, ՈւԳԸ նախագահը, ՈԻԽ նախագահը և այլք: **(Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022թ.-ի մայիսի 24 –ի նիստում)**

5.3. Հանձնախումբը հրամանագրումից հետո 15 օրվա ընթացքում ուսումնասիրում, վերլուծում է առկա տվյալների բազան և կազմում անվանակարգման և խրախուսման ցուցակը:

5.4. Հանձնախմբի որոշման արդյունքները ներկայացվում են ՈԻԳԸ-ի ամբիոնի պատասխանատուներին, ովքեր տեղեկացնում են ուսանողներին:

5.5. Ուսանողը իրավունք ունի եռօրյա ժամկետում բողոքարկել Հանձնախմբի որոշման արդյունքները, որից հետո Հանձնախմբի կողմից ընդունվում է վերջնական որոշում՝ ուսանողների անվանակարգման և խրախուսման ցուցակի վերաբերյալ: **(Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022թ.-ի մայիսի 24 –ի նիստում)**

5.6. Հանձնախմբի կողմից ներկայացված արդյունքների հիման վրա ռեկտորի հրամանով հաստատվում է ուսանողների անվանակարգման և խրախուսման ցուցակը, որից հետո կազմակերպվում է ուսանողների անվանակարգման և խրախուսման միջոցառում: **(Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022թ.-ի մայիսի 24 –ի նիստում)**

6. ԵԶՐԱՓՈՒՄԻՉ ԴՐՈՒՑԹՆԵՐ

6.1. Վարկանիշավորման գործընթացին ուսանողները մասնակցում են՝ իրենց դիմումի համաձայն:

20_____ - 20_____ ՈՒՍՏԱՐԻ
 ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՎԱՐԿԱՆԻՇԱՎՈՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ
 ԳՆԱՀԱՏՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ
 (Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022թ.-ի մայիսի 24 –ի նիստում)

Հ/Հ	Քանակ	Վարկա- նիշային միավոր	Հիմքը կցվում է
Ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնակազմակերպչական աշխատանք			
1.	ՄՈԳ /0,1/		
2.	Մասնագիտական առարկաների ՄՈԳ /0,1/		
3.	Մասնակցություն մասնագիտական կրթական ծրագրերի մշակումներին /2/		
4.	Մասնակցություն մասնագիտական ուսումնական պլանների մշակումներին /2/		
5.	Մասնակցություն դասավանդման բարելավմանը միտված գիտաժողովներին և աշխատաժողովներին (որակավորման բարձրացում) /1/		
6.	Ինտելեկտուալ, գիտահանրամատչելի, նորարարական միջոցառումներին մասնակցություն /1/		
7.	Գիտական խորհրդի անդամ /1/		
8.	Ֆակուլտետի խորհրդի անդամ /0,5/		
9.	Օլիմպիադաներին, մրցույթներին, ցուցահանդեսներին մասնակցություն /2/	Հանրապետա- կան	
		Մաս- նակից /0,5/	Մրցա- նակա- կիր /1/
		Միջազգային	
		Մաս- նակից /1,5/	Մրցա- նակա- կիր /2/
Գիտական, գիտահետազոտական և գիտակազմակերպչական գործունեություն			
10.	Գիտական հոդված /4/	Ազդեցութ- յան գործոն ունեցող Web of Science և Scopus բա- զաներում ընդգրկե- լի ված պար- բերական- ներ /2/	ՌԴ ԲՈՀ-ի ցանկում ընդգրկե- լի ված պարբերա- կան կամ միջազգա- յին գիտա- ժողովի նյութերի ժողովածու /1,5/
			ՀՀ ԲՈԿ-ի ցանկում ընդգրկե- լի ված պարբեր- ական կամ հան- րապե- տական գիտաժո- ղովի նյութերի ժողովա- ծու /1/

11.	Մասնակցություն գիտաժողովի կամ տպագրված թեզիս /2/ (Լրամշակված՝ Գիտական խորհրդի 2022թ.-ի մայիսի 24 –ի նիստում)	Հանրապետական գիտաժողովի /1/	Միջազգային գիտաժողովի /2/		
12.	Գիտահետազոտական նախագծերի և դրամաշնորհային ծրագրերի մասնակցություն /3/	Հանրապետական /1/	Միջազգային /2/		
Ներհամալսարանական և արտահամալսարանական (հանրային) հասարակական գործունեություն					
13.	ՇՊՀ-ի կառավարման խորհրդի անդամ /1/				
14.	ՇՊՀ-ում գործող ժամանակավոր և գիտական խորհրդին կից հանձնաժողովների անդամակցություն /2/				
15.	Ամբիոնի որակի հանձնաժողովի անդամակցություն /1/				
16.	Համալսարանի դիմորդների կողմնորոշման և հավաքագրման աշխատանքների մասնակցություն /1/				
17.	Ոչ գիտական դրամաշնորհային ծրագրերի մասնակցություն /2/				
18.	Կրթական, սոցիալական, մշակութային և սպորտային բնույթի նախագծերի մասնակցություն /1/				
19.	Կամավոր աշխատանք (Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնում, Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնում և այլն) /3/				
20.	ՈւՆ-ին անդամակցություն /1/				
21.	ՈւԳԸ-ի ներկայացուցիչ /1/				